ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

19 մարտի 2013թ. N-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ
ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2013 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.580-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 4-րդ կետով՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող Ռաֆֆու փողոցի հ.115 շենքի հ.34՝30.0քմ ընդհանուր մակերեսով բնակարանը (անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 08.11.2011թ հ.2711859 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Վարդիթեր Գասպարյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

# ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Վարդիթեր Գասպարյանը դիմել է Երևանի քաղաքապետարան Ռաֆֆու փողոցի հ.115 շենքի հ.34՝ 30.0քմ ընդհանուր մակերեսով բնակարանն իր անվամբ մասնավորեցնելու խնդրանքով:

Ռաֆֆու փողոցի հ.115 շենքը նախկինում հանդիսացել է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության ենթակայության երկրագործության և բույսերի պաշտպանության լաբորատորիայի վարչական շենք:

Հայաստանի Հանրապետության կառավարության 20.11.1999թ. հ.689 որոշման համաձայն՝ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության ենթակայության երկրագործության և բույսերի պաշտպանության լաբորատորիայի վարչական շենքը անհատույց սեփականության իրավունքով հանձնվել է Երևանի նախկին Մալաթիա-Սեբաստիա թաղային համայնքին՝ որպես բնակֆոնդ :

Ներկայումս նշված հասցեում գտնվող հ.34 բնակարանը հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը (հիմք՝ անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 08.11.2011թ հ.2711859 վկայական):

Վարդիթեր Գասպարյանը 2002 թվականից հաշվառված է Ռաֆֆու փողոցի հ.115 շենքի հ.34 բնակարանում, որտեղ այլ անձ հաշվառված չէ (հիմք՝ բնակչության պետական ռեգիստրում հաշվառման մասին 03.04.2012թ. հ.279654 տեղեկանքը):

Վարդիթեր Գասպարյանի անվամբ Հայաստանի Հանրապետությունում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ և քաղաքացու կողմից վերջին 10 տարում Հայաստանի Հանրապետությունում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում և օտարում չի կատարվել (հիմք՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի 17.04.2012թ. հ.ԿԽ-2/1678 գրությունը)

Նկատի ունենալով, որ Վարդիթեր Գասպարյանը հաշվառված է և մինչ օրս բնակվում է Ռաֆֆու փողոցի հ.115 շենքի հ.34 բնակարանում, իսկ Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 25-ի հ.580-Ն որոշմամբ հաստատված ծրագրի համաձայն Երևանի քաղաքապետի որոշմամբ կարող են սեփականության իրավունքով անհատույց օտարվել համայնքային սեփականություն հանդիսացող բնակարանները կամ բնակելի տները միայն այն անձանց, ովքեր փաստացի բնակվում և հաշվառված են տվյալ բնակարաններում կամ բնակելի տներում՝ ներկայացնելով բնակարանը կամ բնակելի տունը զբաղեցնելու իրավահաստատող փաստաթղթեր, նշված հասցեում գտնվող բնակարանը սեփականության իրավունքով ընտանիքին անհատույց օտարելու համար անհրաժեշտություն է առաջացել կայացնելու Երևան քաղաքի ավագանու համապատասխան որոշում, որով կլուծվի Վարդիթեր Գասպարյանի բնակարանային հարցը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան համայնքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան համայնքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ